ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի մարտի 30 թիվ 96 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՀԱՑԱՇԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴՈՒՀԻ ԱՐԱՄՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման հավելված 3-ի 61-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Հացաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդուհի Արամյանի 2026 թվականի մարտի 26-ի դիմումը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Հացաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդուհի Արամյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի մասը 2025-2026 թվականների ուսումնական տարվա համար 2 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի ապրիլի 2-ից ապրիլի 3-ը ներառյալ:

2.Վարդուհի Արամյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Հացաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Հացաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Փառանձեմ Ղազարյանի վրա:

3. Վարդուհի Արամյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի ապրիլի 6-ից:

Հայաստանի Հանրապետության
Արագածոտնի մարզպետ

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 4/1/2026 12:39:20 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457 Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. մարտի 30
ք. Աշտարակ